

Ե. Ա. Հ. Մ. Մ Ա. Տ Փ Ա Զ Կ Ա Ա Տ

ՆԻԱԽՈՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՆՍԻՏՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԻԱԽՈՏԻ ՓՈՐՁԱԿԱՑՈՒ

ԾԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼԱՆՈՑՆԵՐ

(Ծխախոտագործի բռնըլու № 1)

22 DEC 2017


Խ. Ա. Զ. Ա. ՄԱՏՈՂԿՈՒՄԱՏ

ԾԽԱԽՈՑԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՋԻԹԵՆԱԿԱՆ ԻՆՍԻՑՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԽԱԽՈՑԻ ՓՈՐՁԱԿԱՑՈՒՆ

ԾԽԱԽՈՑԻ ՃԻԹԻԼԱՆՈՑՆԵՐ

- Ա. ՇԵԹԻԼԱՆՈՑՆԵՐԻ ԱԽՏԱԶԱՆՈՒՄԸ
- Բ. ԶԵՐՄՈՑՆԵՐ ՈՒ ՄԱՐԳԵՐ ՀԻՄՆԵԼԸ
- Գ. ՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
- Դ. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

(Ծխախոտագործի բռույթ № 1)



I ԳԼՈՒԽ

ՇԻԹԻԼԱՆՈՑՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

Մեր մի շարք շրջաններում հողորդանները լուրջ ուշադրություն են դարձրել շիթիլանոցների ախտահանման խնդրի վրա և վորակես պարտագիր վորոշում՝ կոլտնտեսություններին առաջարկել են ախտահաննել (ստերիլիզացիայի յենթարկել) շիթիլանոցները՝ մտցնելով այդ միջոցառումն ազրումինիմումի մեջ։ Այդ որինակին պետք ե հետեւն մյուս բոլոր հողորդանները ևս

Վերջին ժամանակներս՝ համարյա բոլոր ծխախոտագործական շրջաններում, անբարենպաստ կլիմայական պայմանների հետեւանքով, շիթիլանոցներում նկատվել են հաճախակի հիվանդություններ,

Ծխախոտագործը պետք ե իր ժամանակին հաշվի առնի այս հանգամանքը և շիթիլների հիվանդության դեմ համապատասխան միջոցներ ձեռք առնի. վորովհետեւայս հարցը շատ խոչը նշանակություն ունի ծխախոտագործության մեջ. բացի այն, վոր վարակված շիթիլանոցում շիթիլների մի մասը փշանում ե, դրա հետ միասին հիվանդ շիթիլի հետ հիվանդությունը դաշտ և տեղափոխվում ու վարակում ամբողջ դաշտը։

Այս ամենից կարելի յե խուսափել յեթե իր ժամանակին, գեռես սերմը ցանելուց առաջ, նախազգուշական միջոցներ ձեռք առնվեն և պատրաստի ջերմոցները, ջերմոցային իրեղենները և շիթիլների անեցմանն անհրաժեշտ լունգանյութերն ախտահանման յենթարկվեն։ Գիտական հիմնարկների վորձնական աշխատանքներով հաստատված ե, վոր ախտահանման միջոցով հնարավոր ե լինում վոչնչացնել սոլախոտերը, բարեկալել հողի սննդարշար հատկությունները և, վոր ամենագլխավորն ե՝ կանխել շիթիլների հիվանդությունները։

Ախտահանումը կարելի յե կատարել հետեւալ ձեռքով. 1) պատ-

Դյօւքիրատի տպաքան
Պատվեր № 196
Գավկաս 164
Տիքած 1000



11-27041 թ.

ըաստի ջերմոցներին և ջերմոցային իրերին ամերիկյան ձեռվ բուղ (գոլորշի) տալով, 2) նախացանքալիին շերտը տապակարանում այրելով, 3) պատրաստի ջերմոցներն ու իրերը փորմալինի լուծույթով ախտահանելով, 4) ջերմոցների մակերեսույթը հասարակ ձեռվ վառելով:

1. Ախտահանելու ամենալավ ձեռն և պատրաստի ջերմոցներին ու ջերմոցային խառնուրդին բուղ տալը, վորը միաժամանակ տնտեսության համար նուև ամենաշահավետ ձեռն և այնտեղ, ուր կա այդ անելու հնարավորությունը—գոլորշատու գործիքը: Հողի ախտահանման ձերից ամենալավը համարվում է ամերիկյան ձեր, վորի գործադրման համար անհրաժեշտ են. 1) գոլորշատու գործիք, 2) գոլորշու համար 2 սմ դիամետրով և 10 մ յերկարությամբ խողովակ, 3) մի կողմից բաց ամուր տախտակի արկղ՝ մոտավորապես 10 սմ խորությամբ, ջերմոցի լայնությանը հավասար լայնությամբ, 4) կողմից մինչև 9 խոր. մետր տարածության համար՝ նայած գոլորշատու գործիքի ուժին:

2. Նախացանքային շերտի տաքացումը կատարվում է շիթիլ տնկելուց առաջ, այդ նույտակով հատկապես պատրաստված տապակարաններում, վորոնք զրվում են վառարանի վրա: Տապակարանները պատրաստվում են յերկաթաթիթեղից՝ հետեյալ չափերով, յերկարությունը 120 սմ, լայնությունը 70 սմ և բարձրությունը 15 սմ: Թերվում, բարձրացվում են՝ տապակարանի յերկու յերկայնքի կողերը և մեկ լայնքի կողը, իսկ մյուս լայնքի կողը մնում է բաց՝ տաքացված նյութը դատարկելու համար: Ամենից լավ և տապակարանները պատրաստել հաստ (20 ֆունտանոց) յերկաթաթիթեղից:

Այն վառարանը, վորի վրա դրվում են՝ տապակարանները, իրենից ներկայացնում են մի յերկար կանավ՝ 40 սմ խորությամբ (հաշված տապակարանի հատակից մինչև կանավի հատակը), վերին պոռունկները պատած են լինում աղյուսով, վորպեսդի աշխատանքի ժամանակ հողը ցած չթափվի: Կանավի յերկարությունը կախված է նրա վրա դրվելիք տապակարանների քանակից: ավելի նպատակահարմար ե վառարանը պատրաստել 4 տապակարանի համար: Այդ գեղքում վառարանի յերկարությունը կլինի 2,8 մետր: Լայնությունը պետք ե լինի 1,1 մետր: Վառարանի առջեկի մասը լայն և շինվում, վորպեսդի վառելանյութ դարսելը հարմար լինի:

Իսկ հետեւի ծայրին աղյուսներում խողովակ և սարքվում, վորի վրա ել դրվում և յերկաթաթիթեղից պատրաստված մի ուղիղ խողովակի: Վերևից՝ կանավի լայնությամբ զցվում ե 8 հատ յերկաթաձող, իրարից այնքան հեռու, վոր ամեն մի զույգ յերկաթաձողին ընկնի մեկ տապակարան:

Ջերմոցային խառնուրդը (հողի և գոմաղբի խառնուրդ կամ միայն գոմաղբը) լցնում են տապակարանների մեջ և չըովլ մի քիչ խոնավցնում, յեթե ինքը բավականաչափ խոնավ չի: Բոլորովին չոր խառնուրդը բուղ տալ չի կարելի, վորպիճետեն դրանից կառաջանան այնպիսի մասամբ նյութեր, վորոնք վատ են աղղողում սերմի ծլունակության վրա: Բուղ տալու ընթացքում ել, յեթե խառնուրդը չորանում ե, նորից պետք ե խոնավացնել: Բուղ տալու համար տապակարանները պետք ե ծածկել փայտե խուփերով, 5 բողին մեկ անգամ խառնուրդը մի լավ խառնել հատուկ թիակներով, մանավանդ խնամքով պիտի խառնել պատերի կողքերով, վրպեսդի խառնուրդը հավասարաչափ տաքանա: Զերմատիճանը պիտի հասցնել Ցելսիուսի ջերմաչափով 100-ի կամ Ռենյուրի ջերմաչափով՝ 80-ի: Հենց վոր խառնուրդի ջերմաստիճանը հասնի այդ չափին, մի անգամ ել լավ պիտի խառնել և կրակի վրա թողնել ելի մի $\frac{1}{2}$ ժամ, վորից հետո խառնուրդը պետք ե կիտուկ անել Յեթե ջերմաչափ չլինի, կարելի յե ողտագործել մանր կարտոֆիլ զնելով այն խառնուրդի մեջ: Յեթե կարտոֆիլը զեթ յերեսի շերտից յեփել ե, նշանակում ե՝ խառնուրդը բավականաչափ տաքացել ե:

Յերեք հոգին կարող են աշխատել յերկու վառարանի վրա (այսինքն՝ 8 տապակարանի): Այդ գեկությունը յերկու հոգին լցնում ու գատարկում են տապակարանները, իսկ մեկ հոգին վառարաններին և հետեւում և ոգում ե առաջին յերկուսին: 8 ժամ աշխատելով՝ 3 հոգուց բաղկացած այդպիսի մի խումբը կարող է բուղ տալ 40 տապակարան կամ 3,6 խոր. մետր խառնուրդը: Միջին հաշվով պիտի նկատի ունենալ, վոր 2 խոր. մետր խառնուրդ ըստ տալու համար կողրծադրվի 1 խոր. մետր վայտ: Վետք ե ունենալ հատուկ թիակներ ու կրելու պատգարակներ՝ զեռ բուղ չտված խառնուրդը տապակարանների մեջ փոխադրելու համար, ինչպես և հատուկ պատգարակներ ու թիակներ՝ բուղ տված խառնուրդը տապակարանից դատարկելու համար:

Տապակարանների մեջ համենավասար տաքություն ստանալը դժվար ե. բոլոր մասերում ել ջերմաստիճանը 100-ի չի հասնում, ուստի և խառնուրդը լիովին չի ախտահանվում: Այս բացը ծածկելու համար հանձնաբարվում է բուղ տալու ժամանակ խառնուրդի վրա ցանել ֆորմալինի թույլ լուծույթ—մի մաս ֆորմալինին խառնել 200 մաս ջուր (Յ ատպակարանին—մի դույլ խառնուրդ):

Սակայն ախտահանման այս ձեւը վերին աստիճանի տնայնագործական և սոցիալիստական տնտեսության մեջ վոչ մի հետանիար չունի: Այստեղ այս ձեւի վրա կանգ ենք առնում լոկ այն պատճառով, վոր առայժմ դեռևս հաճախ ենք դիմում նրանու ինչ ձեռք ել վոր խառնուրդին բուղ տալու լինենք, այնուամենայնիվ դրանից հետո խառնուրդը, նախ քան ցանքը, միքանի որ (5—7 որ) պիտի հանգստանա, վորովհետև նոր բուղ տված խառնուրդի մեջ բույսի աճումը դանդաղ ե ընթանում: Կարելի յե ցանքից 1—2 ամիս, առաջ բուղ տալ սակայն այս դեպքում խառնուրդը պետք ե ամուր ծածկել, վորպեսզի նրա մեջ նոր վարակներ չընկնեն: Հողի շերտը պետք ե բուղ տալ 6—10 սմ. հաստությամբ:

3. Զերմոցների ախտահանումը ֆորմալինով.— այս ձեւը պիտի կիրառել այն դեպքում, յերբ վորեւ պատճառով հնարավոր չի վերոհիշյալ ձեռով բուղ տալ ջերմոցներին և յերբ ջերմոցներն արդեն բոլորվին պատրաստ են ցանքին, այսինքն՝ ֆուում ե միայն սերմը ցանել ֆորմալինի լուծույթը պատրաստելու համար պետք ե սովորական վաճառվող ֆորմալինի մի մասի հետ խառնել 40 մաս ջուր, ապա այդ լուծույթը ցանել դանդաղորեն, վորպեսզի հողի սննդատու շերտը (8 սմ.) համահավասար կերպով հագենա լուծույթով: Մեկ քառ. մետրի վրա պետք ե ցանել 10—12 լիտր լուծույթ: Լուծույթը ջերմոցներում և մարդերում ցանվում ե ցնձուղի միջոցով: Լուծույթը ցանելուց հետո ջերմոցները կամ մարդերը պիտի ծածկել մի վորեւ բանով ու այդպես թողնել մոտ յերկու որ ու գիշեր (բայց դրանից վոչ ավելի), ապա պիտի բանալ, վոր մի քիչ քամհարվի, և այդպիս բաց պիտի թողնել այնքան, վոր ամբողջ ֆորմալինը գոլորշիտանա: Այս ձեւի ախտահանումը կտևի 1—2 շաբաթ, նայած յեղանակին: Սակայն այս մեն ունի իր հիմնական թերությունները—թանգությունը և ֆորմալինի սակավությունը, բացի այդ, այս ձեւի ախտահանումը կախված է յեղանակից, ուստի այս ձեւն պիտի դիմել միայն

բացառիկ դեպքերում: Մեկանում Խ. Հայաստանում, միքանի ծխախոտագործական շրջաններում, ինչպես, որինակ՝ կոտայքում, վառելիքի պակասություն է զգացվում, ուստի և այդպիսի շրջաններում հանձնաբարվում ե կիրառել ֆորմալինով ախտահանելու ձեւը:

4. Մարդի մակերեսույթը վառելն այնքան պարզ միջոց ե, վոր առանձին բացարություններ չի պահանջում: Ծղոտը կամ խոփվը հավասար շերտով դարսում են մարդի յերեսին և վառում: Այսպես կը պահպան ե այնքան, վոր 5 սմ. խորության վրա հողը տաքանում է: Կուտակված մոխիրը պիտի խառնել հողի հետ: Այս միջոցին պիտի դիմել միայն ամենածայրանից կեպով, վորովհետև մարդերի յերեսը վառելիս, փշանում ե հողի սննդարար նյութերի մի մասը, վորը բացասաբար ե ազդում շիթիների աճման վրա և, բացի այդ, արդյունքի հատնելու համար շատ վառելանյութ ե գործադրվում:

Սակայն, յեթե հողն ախտահանված է, իսկ սերմը և մյուս պարագաներն ախտահանման չեն յենթարկված, ապա այնուամենայնիվ վարակումը կարող ե հեշտությամբ տեղի ունենալ: Ուստի և սերմի ախտահանումը շատ կարեւոր հանգամանք է, վոր կապահովի շիթիների առողջությունը:

Վերին աստիճանի արածված բակտերիալ բարձրականացնելու միջոցը լինուալ պայմանագրային պահանջության վեմ պայմանագրերու ամենալավ միջոցը սերմերը լինուալ պիտի այրելն է, ըստ վորում այս հանգամանքը չի անդրադառնում նրանց ծլունակության վրա: Լյապիսի լուծույթը պատրաստվում է հետեւյալ ձեռվի: Լյապիսի լուծույթը պետք ե պատրաստել կավե կամ փայտե (և վոչ թե մետաղե) ամանի մեջ: Մեկ գրամ լյապիսի համար պետք ե վերցնել մեկ լիտր ջուր: Սերմը պարկով գցում են լուծույթի մեջ և թողնում 10—15 րոպե, պարկը լուծույթի մեջ պետք ե թափահարել, վորպեսզի սերմերը բռլորն ել թրջվեն: Այնուհետև հանում են, սերմերը մաքուր ջրով լվանում, թողնելով ջրի հոսանքի մեջ 10 րոպե: Իսկ յեթե հոսող ջուրը չկա, ապա, յուրաքանչյուր 2—3 րոպեն մեկ՝ ջուրը փոխում են 5 անգամ: Լվանալուց հետո սերմերն ածում են շրջանակին ամրացված մաքուր շորի վրա, չորացնում են սովերի մեջ և ապա միայն ցանում: Ախտահանումը պետք ե կատարել անմիջապես, նախ քանացանելու: Ավելի լավ է ախտահանել թարմ լուծույթի մեջ: Լու

ծույթը պահել կարելի յի միայն անթափանց և լավ խցանված ամանի մեջ: Մինուույն լուծույթից ոգտվել կարելի յի Յ անդամից վոչ ավելի: Մեկ կիոռքամ լյաղիսի լուծույթին պետք ե վերցնել հինգ կիոռքամ սերմ: Շիթիելու նախապատրաստական շրջանում անհրաժեշտ բոլոր գործիքներն ու պարագաները նախորոք ախտահանել ֆորմալինի լուծույթով, վորի համար մեկ մաս ֆորմալինին պետք ե վերցնել 25 մաս ջուր և խառնուրդ պատրաստել և այդ խառնուրդով լավ թրջել ախտահանման յենթակա բոլոր իրերը: Այս ախտահանումն անհրաժեշտ է կատարել ցանքից միքանի որ առաջ և ցնձուղի միջոցով: Հողի, սերմերի և ջերմոցային պարագաների ախտահանումը հիվանդությունների դեմ ձեռք առնելիք նախնական միջոցառումների այն սխտեմն ե, վորի կանոնավոր և անպայման կիրառումը կապահովի ջերմոցային տնտեսության առողջացումը և յերաշխիք կտա բույսի հետագա առողջ զարգացման ու աճման համար:

II ԳԼՈՒԽ

ԶԵՐՄՈՑՆԵՐ ՈՒ ՄԱՐԴԵՐ ՀԻՄՆԵԼԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

ԿՈՒԽՈԶՆԻԿՆԵՐ, ԲԲԻԳԱԴԻԲՆԵՐ, ՈԳՏԱԴՐՈՒՆԵՐ ԱՌԱՋԱՎԱՐ ԿՈՂ-ՆՈՉՆԵՐԻ ՓՈՐՁՅ, ՓԱԽԱՆԱԿԵԲ ԶԵՐ ՓՈՐՁԵՐՆ ԵՅԼ, ԿՈՒԽՈԶՆԵՐԻ ՀԵՏ

Տարիների փորձը ցույց տվեց, համարյա Հայաստանի բոլոր ծխախոսադործուկան հիմնական շրջաններում ժամանակին շիթիւնոցներ չեն նախապատրաստում և ցանում, այլ այդ աշխատանքը կատարվում է մեծ ուշացումով, ժխախոտը լրիդ չի հասունանում և յենթարկվում ե ցրտահարության: Վերոհիշյալ գրությունը բացասաբար և անդրագունում բերքի քանակի վրա, նույնպես և իջնում և վրասկը: Նման յերեսույթից խուսափելու համար, պետք ե, վորքան հնարավոր ե, շիթիլանոցին շուտ հողամաս տրամադրել և ժամանակին պատրաստել ջերմոցներ ու սառը մարգեր:

Հայաստանի ժխախոտագիտական փորձակայանի փորձերը գալիս են ասելու, վոր Հայաստանի համարյա բոլոր ծխ. շրջաններում շիթիդի աճեցումն անհրաժեշտ է կատարել ապակու տակ (Հիրմոցներում): Նախալեռնային ծխ. գյուղերում, վորտեղ գարունը ուշ և բացվում և քամիները հաճախակի յեն, շիթիդի տմացումը պետք ե կատարվի կիսատաք ջերմոցներում կամ ապակու տակ, առանց տաքացնող ձիու աղբեշերտի: Կայանի փորձական արվաւաները ցույց են տվել, վոր պետք ե կառուցել կիսատաք ջերմոցներ, այսինքն 20—25 սմ. հաստությամբ ձիան գոմաղբով:

ԶԵՐՄՈՑՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Նախքան ջերմոցին հատկացված հողամասում չափ ու ձեանելը, անհրաժեշտ է նախորոք վորոշել ջերմոցի մեծությունը:

Լայնությունը պետք է անել անտեսության մեջ յեղած շրջանակների յերկարության չափով, իսկ յերկարությունը կախված է այն շրջանակների քանակից, վորոնցով պետք է ծածկվի ջերմուցը: Հարմարության տեսակետից և ջերմուցային տարածությունը լավ ոգտագործելու համար, հանձնարարվում է պատրաստել 10 շրջանակավոր ջերմոցներ: Այդ հաշիվներն անելուց հետո, փալտերի վեցերի և թերթի ոգնությամբ հողամասի վրա պետք է սկսել նշաններ անել ըստ վորում ջերմոցներն այնպես պետք է սարքել, վոր իբրենց յերկարությամբ ընկած լինեն արևելքից դեպի արևմուտք, վորպեսզի արեգակի ճառագայթներն ավելի լավ տաքացնեն: Վորպեսզի ջերմոցների խնամքը հեշտ լինի, նրանց միջև յեղած կածանը պետք է շնչել 1 մետր լայնությամբ, իսկ այն ճանապարհները, վորոնց վրա ջերմոցը բանալիս պետք է դարսվին շրջանակները, պետք է լինեն 2,5 մետր լայնությամբ: Ջերմոցների նշաններն անելուց հետո, ակտում են դասավորել ջերմոցային տուփերը, վորոնց վրա հետագայում պետք է դրվեն շրջանակները: Մեկ ջերմոցի համար նախատեսնված հողամասի կողքերից փայտե ձողեր են խփում և նրանց վրա մեխով ամրացնում են 3 սանտիմետր հաստության տախտակներ այն հաշվով, վոր հարավային կողմը լինի 20 սմ. բարձրությամբ, իսկ հյուսիսայինը՝ 30 սմ. այսպիսով շրջանակները դեպի հարավ վորոշ թեքություն են ստանում, վորն անհրաժեշտ է ջուրը հոսելու համար: Դրան համապատասխան շինվում են կողմերի պատերը: Իսկ յեթե տուփերը հյուսելով են շինում, ապա պետք է պահպանել հարավային ու հյուսիսային պատերի նույն բարձրությունը և ջերմոցների նույն ուղղությունը:

Ջերմոցները պատրաստում են յերկու կերպ: 1. ձիութեարմ աղբի տաքացնող շերտով, 2. առանց այդպիսի շերտի:

Առաջին գեղքում, տուփերը սարքելուց հետո, ամենատաքային՝ ծայրի ջերմոցի ամրող հողը փորփում, դուրս և հանվում 30 սմ. խորությամբ: Առաջացած փոսի մեջ հավասարաչափ փոփում ե ծղոտի ու ծիու աղբի խառնուրդ այնքան, վոր խնամքով հավասարեցնելուց ու տրորելուց հետո 20 սմ. շերտ կազմի: Եթե տնտեսության մեջ ծղոտի պակաս և զգացքում, այդ գեղքում ջերմոցը կարելի յե սարքել միայն ծիու թարմ աղբով:

Այնուհետև, նույն խորությամբ փորփում ե յերկրորդ ջեր-

մոցը և հողի մոտ մեկ յերրորդը (10 սանտիմետր հաստության շերտ) լցվում է առաջին ջերմոցը, ուղղակի ծղոտի ու աղբի ամրացրած շերտի վրա, իսկ հողի ալելյովը մի կողմն և նետվում: Յերկրորդ ջերմոցում առաջացած փոսը նույնական լցնում են 20 սմ. հաստությամբ ծղոտի ու աղբի խառնուրդի շերտով, ապա նույն ձեռլ յերրորդ ջերմոցից քանդած հողից յերկրորդ աղբի շերտի վրա լցնում են նույնական 10 սմ. հաստության շերտով:

Այս ձեռվ աշխատանքը հասցնում են մինչև վերջին ջերմոցին, վորի համար ոգտագործում են իր հողը: Բոլոր ջերմոցների հողը խնամքով մաքրվում է ամեն տեսակի արմատներից, աղբից, փխրացվում ու հավասարեցվում է: Հողի յերեսից փովում է փատճ սննդարար նյութերի շերտը 6 սմ. հաստությամբ, վորի մըշակության մասին կխսունք ներքեւում:

Յերկը որդ գեղքում, յեր ջերմոցը պատրաստվում է առանց տաքացնող շերտի, հողը դուրս տալու կարիք չկա: Այդպիսի ջերմոցը սարգվում է նախորդը ներկված հողի վրա: Տվյալ գեղքում ջերմության աղբյուրը են հանդիսանում բացառապիս արևի ճառագայթները: Այս տիպի ջերմոցի տուփերը սարքելուց հետո, հողը լավ փխրացվում է, ապա, մակերեսը բարձրացնելու համար՝ կածաններից քիչ հող և ալելյացվում է վերմից փովում և սննդարար շերտը:

ՍԱՌԸ ՄԱՐԴԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Գարնանը, հենց վոր հողը բավականաչափ ցամաքի, գեռես աշխանից հերկված կամ փորփած հողամասը ցամանելուց (փոցինելուց) հետո, ակտում են մարգերի բաժանել նախորդը վորոշելով մարդերի յերկարությունն ու լայնությունը: Մարգերի յերկարությունը վորոշելիս պետք է հաշվի առնել հողամասի ուղղեթը (մակերեսը) և պետք է խուսափել անհարթություններից ու կանաչներից: Ամենից լավը ե մարգերը պատրաստել 10—15 մետր յերկարությամբ և 1 մետր լայնությամբ: Այդ գեղքում 50 քմ. տարածությունից կարելի յե վերցնել 1 հեկտար հողամասի շեթիր Մարգերի մեջ յեղած կածանները պետք ե ունենան 30 սմ. լայնություն, հաշվելով մեկ մարգի վերին ծայրից մինչև մյուս մարգի վերին ծայրը: Նկատի ունենալով այս հաշվիները, բաժանումը կատարում են թերթի ու ցցերի ոգնությամբ: Այնուհետև

ձեռնարկում են մարգերը պատրաստելուն, վոր սկսում են մարգերի արանքի կածանը պատրաստելով, զրա համար փորում են նշված կածանը, հողը հավասարաչափ լցնում են կաղմվող մարգերի վրա, ըստ վորում մարգերի կողերը մի քիչ թեք պետք ե անել, վորպեսզի հողը ցած չժափվի: Ապա ուրագով (թորի) հողը լավ փիրացնում են և փոցխով հավասարեցնում, հետեւով: Վոր կենարոնը քիչ բարձր լինի ծայրերից, վորպեսզի հասակայում վոր չընկնի: Այս աշխատանքի ընթացքում հողը մաքրում են ամեն տեսակի արմատներից ու աղբից:

Այսուհետեւ հողը պարագնում են (վոր առանձնապես հանձնարկում և անել, յեթե մարգերը սարքում են առանց վը տած սննդարար նյութերի խառնուրդի) և թույն սրսկում արջուկը-իշխախառանը վոչնչացնելու համար, վորի մասին տես «Ճխախոսի շիթիլի վնասատուն երը» գինում: Վորպես պարագանայութ վերցնում են ծծմբաթթվային ամոնիում 1 քառ. մետրին 10 զրամի հաշվով, վորը նախ տրորում ու մազում են խիտ մաղով, ապա հավասարաչափ շաղ տալիս հողի յերեսին (հաշվասարաչափ ցանելու համար պետք ե ցանի հմուտ մարդ):

ՄՆԴԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԽԱՌԱՌԻՐԴ ՊԱՏՐԱՍՏԵԼԻ

Մնդարար նյութերի խառնուրդ կարելի յե պատրաստել վոչ միայն փտած գոմաղբից, այլև գոմաղբը կարելի յե փոխարինել հետեւյալ նյութերով՝ 1. անտառային հողով, 2. գետի ավաղով, 3. բաղմամյա խոտաբույսերի հողով:

Շատ ծխախոտագործներ այն կարծիքին են, վոր առողջ-լավ շիթի կարելի յե ստանալ միայն այն դեպքում, յերբ շիթին աճեցնում են փտած գոմաղբի վրա: Մյուսթենական ծխախոտի ինստիտուտի և Հայաստանի փորձակայանի վերջին փորձնական տը-վյալները դալիս են ասելու, վոր այդ միտքը սխալ ե և անհիմն: Գոմաղբն աղատ կերպով կարող ենք փոխարինել վերոհիշեալ նյութերով: Որինակ՝ իջևանի, Շամշադինի, Ալահիւրդու և Ղափանի շրջանները հիշած նյութերով հարուստ են և կարող են գոմաղբի սակավության դեպքում ոգտագործել հիշյալ սննդարար նյութերը, իսկ անտառագուրգ կոտայքը և այլ ծխախոտագործ շրջանները կարող են ոգտագործել բաղմամյա կերպույսերի տակի հող և գետավագ:

Մնդարար նյութերի խառնուրդ կազմելիս, խառնելիք նյութերը նախ տուանձին-առանձին մազում են: Այդ մաղը պատրաստված է լինում այսպես. մի սովորական փայտի շրջանակի վրա (2 մետր յերկար. և 1 մետր լայն.) ամրացվում է լարացանց, վորի ծակոտիները լինում են 2 սանտիմետր: Այդ մաղը դնում են թեք դրությամբ և խառնելիք նյութը թիակով գցում են վրան: Այն, ինչ վոր անցնում է մաղի միջով, վերցնում են խառնուրդ կազմելու համար: Խառնուրդ կազմելը հասարակ բան ե. մի վորոշ տարածություն մաքրում են, ապա բանվորները հերթով այդտեղ են լցնում խառնելիք նյութերը:

Մնդարար նյութերի խառնուրդն ավելի լավ է պատրաստել հետեւյալ կերպ ըստ շրջանների:

Ալլահիւրդի, իջևան, Շամշադին, Ղափան՝ $\frac{1}{3}$ մաս փտած գոմաղբ + $\frac{1}{3}$ մաս անտառի հող + $\frac{1}{3}$ մաս գետի ավաղ:

II-րդ — 50 տոկոս գոմաղբ + 25 տոկոս ավաղ + 25 տոկոս անտառի հող: Ամեն դեպքում ավաղը պետք է զուրկ լինի տղմից:

III-րդ — 50 տոկոս անտառի հող + 50 տոկոս գոմաղբ:

Կոտայքի շրջանում՝ 1-ին որ. — 50 տոկոս խոտաբույսի հող + 25 տոկոս ավաղ + 25 տոկոս գոմաղբ: II-րդ — 50 տոկոս գոմաղբ + 50 տոկոս խոտաբույսի հող. Խոսքը միշտ բաղմտմյա խոտաբույսերի հողի մասին ե: Այս ձևով կազմված խառնուրդը փոփում է մարգերի կամ շերմոցների վրա, ինչպես վերն ասացին:

ՄԻԱՅՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԶՈՅՎ, ԳԻՏԱԹՅՈՒՆ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ՍՈՅՄՐՅՄԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾՆՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՅՎ, ԿՈԼՏՆՏԵՍՈՅՆ ԼԱՅՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՎԵԼԻ ԿԱՄՐԱՆՅ ՄԵՐ ՀՈՒՄՈՒՅԹՈՅԻՆ ԲԱԶԱՆ:

Յուրա մարդկարի մեջ ծխախոտի սերմը ցանելու ամենահար-
մար ժամանակը պիտի համարել մարտի առաջին կիսից—ապրիլի
սկիզբը, սակայն վոչ ուշ ապրիլի 10-ից, նկատի ունենալով, վոր
ապրիլին ցանվածից ստացված շիթիլը պիտք ե գործադրվի վեր-
ջին տնկման համար:

Մեկ քառ. մետր լըջանակավոր շիթմոցում ցանք կատարելու
համար՝ անհրաժեշտ ե ունենալ սերմ 0,8 գր., իսկ մարդի համար,
1,1 գր., այսքան սերմացուն միանգամայն բավական ե անհրա-
ժեշտ քանակի շիթիլ ստանալու համար. այդ նորմաները չպետք
ե ավելացնել, վորովհետև խիտ ցանքի դեպքում, ստացվում են
յերկար, չափազանց նուրբ ու թույլ արմատներով շիթիներ և
այդպիսի շիթիլները դաշտ փոխադրելին՝ նրանց մեծ մասը փշանում
ե, իսկ վողջ մնացածներն ել շատ դանդաղ են աճում ու մեծա-
նում: Զավիյա ավելի նորը ցանելու դեպքում ել ստացվում են
չափազանց կարծ ու խոշոր տերեններով շիթիներ, վորոնց դաշ-
տում անկերու գործն ել բավականին դժվարանում ե: Վերոհիշալ
նորմայով սերմը բավական ե ցանքի համար, յիթե այդ սերմա-
ցուն լավ ծլունակություն ունի: Յեթի սերմացուն 85°/0-ով ծլու-
նակ ե, այսինքն 100 հատիկ սերմից 85-ը ծլում ե, լավ ծլունա-
կություն ե համարվում: Ծլունակության ավելի ցածր տոկոս
կաղմելու դեպքում, վերցվում ե ավելի մեծ նորմայով սերմացու:

Ծխախոտի արդյունաբերության համամեռքենական ինստի-
տուտի կողմից տարածված սերմացուն ստուգված և ունի 90—95
տոկոս ծլունակություն, ուստի այդ սերմացուն համարվում ե
միանգամայն վստահելի: Ծխախոտի սերմը ցանվում ե չոր գրու-
թյամբ կամ թթված-ծլեցրած: Սերմը չոր վիճակում ցանելը վորոշ
տեսակերպից ավելի լավ արգունք ե տալիս, քան թթված ցա-
նելը: Չոր ցանված սերմի շիթիլը հիվանդություններին ու ան-
բարենպաստ պայմաններին ավելի լավ ե դիմանում, քան թթված
սերմացվելու ստացվածը: Սակայն չոր գրությամբ սերմը ցանելու
թերությունն այն ե, վոր ավելի ուշ ե ծլում (10—12 որով).
մինչև նրանց դուրս գալն արդին մոլախոտը բռնած է լինում և
հենց առաջին քաղհանին նորածիլ շիթիլները բավականին վնաս-
վում են: Թթված-ծլեցրած սերմացու ցանելու միջոցին դիմում
են այն դեպքերում, յերբ վորեն պատճառով ժամանակին ցանք

III ԳԼՈՒԽ

ԾԱՎԱԼՈՒՆ ՖՐՈՆՏՈՎ ԴԵՐԻ ԾԽԱԽՈՏԻ ՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵԽԱԽՈՏԻ ՍԵՐՄԻ ՑԱՆՔԸ

Ծխախոտն ամենից շատ ջերմություն պահանջող կուլտու-
րաներից մեջն ե: Մեր ծխախոտագործական շրջաններում մշակ-
վող ծխախոտի տեսակը (Սամոն) իր լիակատար զարգացման
համար պահանջում է 3—4 տաք ամիս, հաշված շիթիլը դաշտ
փոխադրելու ժամանակից: Դրա համար ել ծխախոտի տնկման
աշխատանքն այնպիսի ժամանակ պիտի կատարել, վոր հնարավոր
լինի ոգտագործել ամառվա ամենատաք ու չոր յեղանակները,
մանավանդ նրա տերենները չորացնելու համար: Այդ պատճառով
մեզ մոտ ընդունված է ծխախոտը մշակել շիթիլման միջոցով, վոր
վաղորոք աճեցվում է ջերմոցներում, վորպեսզի այդպիսով կա-
րելի լինի ժամանակ շահել և աշնան տաք յեղանակներին չորաց-
նել տերենները: Դրա համար նախորոք պատրաստելով շիթիլանց-
ները և բոլոր անհրաժեշտ նյութեղեննը՝ չպետք ե ժամանակակի կորցնել, այլ շուտով պիտի սկսել ցանքը, վորպեսզի տաք յեղա-
նակներն սկսվելուն պիստ պատրաստի շիթիլ լինի դաշտ փոխա-
դրելու:

Մեր պայմաններում՝ ծխախոտի շիթիլը տնկելու ամենալավ
ժամանակը համարվում է մայիս ամիսը: Շիթիլների հասունաց-
ման համար պահանջվում է՝ տաք ջերմոցներում մինչեւ 50 որ,
իսկ սառը՝ 60 որ: Հետեւապես, ժամանակին պատրաստի շիթիլ
ունենալու համար, անհրաժեշտ է սերմը ցանել մարտի սկզբից:

Վորպիս կանոն, ջերմոցներում նորածիլ ծխախոտն ավելի
լավ ե պաշտպանվում անբարենպաստ յեղանակի՝ զլխավորապես
ցրտերի աղղեցությունից: Ջերմոցներում սերմը ցանելու ամենա-
լավ ժամանակը համարվում է փետրվարի վերջը և մարտի սկիզբը,
սակայն Հայաստանում, ուր ցուրտ գարունը յերկար ե տեղում,
ավելի լավ ե ցանքը կատարել մարտի սկզբից:

չի կատարվել, ուստի անհրաժեշտ և շոտագիցնել սերմի ծլման պրոցեսը:

Թրջված-ձեցրած սերմացու ցանելու դեպքում, ծիլերը զուրս են դալիս հողից 5-7-րդ որը: Թրջված-ձեցրած սերմացուն բուսանում և համաշափ և կանխում և մոլախոտերին, վորի շնորհիվ տուաջին քաղհանը հեշտանում եւ: Սերմի ծլեցումը կատարվում և այսպես. սերմացուն մի քանի անգամ լավ լվանում են, լցնում են քաթանից կարված փոքր տոպրակներում և բերաները կապում, բայց այնպես, վոր սերմացուն տոպրակի մեջ շատ սեղմված չինի: Այդ դրությամբ տոպրակները դնում են զուր բայց վոչ շատ տաք ջրի մեջ ու այդպիս թողնում ամբողջ 12 ժամ: Այնուհետև թրջված սերմացուն լվացվում եւ՝ վրան լցնելով մաքուր ջուր այնքան, մինչև վոր տոպրակի տակից թափվող ջուրը ըոլորովին պարզվի: Ապա քամում են, ամբողջ ջուրը հեռացնում, սերմը խառնում, վրապեսզի ավելի շատ ող մտնի նրա մեջ և տեղափորում են մի սենյակում, դարակների վրա, այնպիսի սենյակում, ուր շարունակ 25—30 առաջին ցեղիուսի ջերմություն կա: Տոպրակների վրայից ծածկում են, վորպեսզի սերմը լավ չչորանա: Շատ ոպտակար ե, վոր սերմացուն ծիլու ժամանակ շարունակ նույն ջերմության մեջ չփանվի: Հարկավոր ե որպական մեկ անգամ, որինակ՝ զիշերը ջերմաստիճանն իջնի 6—7 տատիճանով: Այդ դեպքում սերմացվի ծլունակության տոկոսը կրաքճանառ: Այնուհետև, ամեն որ մեկ անգամ պետք են նայել սերմացվին և թրջել, ավելի ճիշտ՝ լվանալ ու քամել ավելորդ ջուրը, ինչպիս վերև տուիցի:

Սերմը ծիլու պիտի թողնել մինչև այն ժամանակ, յերբ նրա վրա կերեան փոքրիկ, սպիտակ ծլիկներ: Ցեթեւ ավելի շատ թողնվի, ուղար ծիլերը կերկարեն և ցանելու ժամանակ կկոտրվեն կամ կկպչին իրար և կդժվարացնեն կանոնավոր ցանքը:

Ծիլու ժամանակ դպուշ պիտի լինել, վոր տարբեր տեսակների սերմը չխառնվեն իրար:

Ցանելուց առաջ ջերմոցի կամ մարգի մակերեսութը խնամքով հավասարեցվում և ամրացվում և տախտակի կամ պնդոցի (տրամբովկա) միջոցով: Ապա, յեթե ծլեցրած սերմացու յեւ ցանքում, մարգերի և ջերմոցների յերեսին ջուր և ցանքում, խոնավացվում: Չոր սերմ ցանելու դեպքում կարելի յեւ և ջուր չցանել:

Վորովհետեւ ցանվելիք տարածության հետ համեմատած ցանվող սերմացվի քանակը չափազանց փոքր և լինում և դժվար է հավասարաչափ ու համաչափ ցանել, դրա համար ցանելուց առաջ սերմացուն խառնում են հողի, մաղած գոմազրի կամ մոխրի հետ: Ցանվը պիտի հաշվով կատարել, վոր առաջուց չափած սերմացվի ամբողջ քանակությունը հավասարաչափ բաժանվի յուրաքանչյուր միավոր հողամասի վրա: Զերմոցում ցանելիս նախ պետք է ջերմոցը յերկարությամբ յերկու մասի բաժանել և ամեն մի մասը ցանել առանձին:

Մարգերը ցանելիս՝ կարիք չկա մարգը յերկու մասի բաժանելու, այլ պիտի ցանել միանդամեջ ամբողջ լայնությամբ, վորովհետև մարգի լայնությունը (1 մետր) անհամենատ ավելի փոքր և ջերմոցի լայնությունից, վոր յերկու մետր և լինում:

Ծխախոտի սերմը ցանելին ամենասպատասխանատու աշխատանքներից մեջն ե, ուստի այդ գործը պետք է հանձնարարել փորձված ծխախոտագործի: Ցանելիս անհրաժեշտ են հետեւ, վոր համաչափ ցանքս ստացվի, հակառակ զեպքում կարող ե փշանալ ամբողջ գործը:

Սերմը ցանելուց հետո ջերմոցի ու մարգի վրա շաղ և տըր վում մաղված փուլածքախառնուրդ կամ միայն հին դոմաղը, վոր առաջուց պիտի պատրաստված լինի այն ձևով, վարի մասին խոսք կլինի հաջորդ բաժնում: Սերմը ծածկող այդ շերտի հստությունը 3—4 սանտիմետրից ավելի չպիտի լինի, թե չե ծիլը չի կարող հողի յերեսը դուրս գտն: Ավելի բարակ շերտը նույնպես աննպատակահարմար ե, վորովհետև ջրելուց սերմերը կարող են բացվել: Այս բոլորից հետո, ջերմոցներն ու մարգերը խնամքով պնդացվում են տախտակով կամ պնդիչով, ապա ջրվում են մանրածակոտի ցնձուղով, վորից հետո ծածկոցներով, խսիրներով կամ ինչ վոր պատրաստված ե այդ նպատակով:

Ջրելիս պետք է զգուշ լինել, վոր մարգերի յերեսին լակներ չառաջանան, թե չե սերմերը դուրս կընկնեն հողից և կստացվի անհամաչափ ցանք: Հետագայում եւ՝ ջրելու ժամանակ՝ նույնպես զգուշ պիտի լինել:

ԾԽԱԽՈՏԻ ՅԵՐԵԼԻ ԽՆԱՄՔԲԸ

Ծխախոտի կուտարերապի մակության ամենաբարդ աշխատանքներից մեկը շիմքներ անցնելին եւ Ծխախոտի մշակության

վերջնական արդյունքը կախված են նրանից, թե այս կամ այն տնտեսությունն ինչ չափով են կարողացել ճիշտ կազմակերպել իր շիթիւնոցի աշխատանքը և ապահովել իրեն ժամանակին հասունացած ու անհրաժեշտ քանակով շիթիւներով։ Այս պատճառով, դարնան ընթացքում, ծխախոտագործական կոլտնտեսություններում ուշադրությունը պիտի կենտրոնացվի նաև ծխախոտի շիթիւնոցների աշխատանքների վրա։

Շիթիւնոցների խնամքի ընթացքում անհրաժեշտ են մեծ ուշադրությամբ հետեւ, վոր կանոնավոր լինի՝ 1) ջրելու գործը, 2) քաղանը, 3) ստվերավորելը, 4) հող ցանելը, 5) պարարտացուցիչ ջրումը և 6) պայքարը հիմանդրությունների, և վասատուների գեմ։

1. Ջրելը.—ցանքից անմիջապես հետո ջրելու գործողությունը պիտի կատարել մեծ զգուշությամբ, վորովհետեւ քանի դեռ սերմը չի ծել ու չի արմատակալի, ջրելուց կարող են բացվել, հողի յերեսը զուրս գալ ու վիշանալ։ Զգուշությունն անհրաժեշտ են նաև այն պատճառով, վոր շատ ջրելը նպաստում է հիմանդրություններ սուաջանալուն։ Ջրելու գործը կանոնավոր լինելու համար, ուշադրությամբ պիտի հետեւ ջերմոցի ու մարգի վոչ միայն մակերսի խոնավությանը, այլև պետք է հետեւ, թե ինչ աստիճանի յեն խոնավ շիթիւնի առաջ հողի շերտը։ Հողի այդ շերտը վոչ շատ չոր պիտի լինի, վոչ ել շատ խոնավ, այլ պիտի լինի խոնավանման։ Յեթե շիթիւնոցը շինված է կավահողի վրա, ապա շատ ջրելուց նա կցեխանա, ջուրը դժվարությամբ անց կկացնի, իսկ դրանից կարող են հիմանդրություններ սուաջանալ։ Յերբ շիթիւն գետ շատ փոքր է, կամ նոր և միայն դուրս գալիս, պետք է ավելի քիչ ջրել և այն ել ամենամանածակոտի ցնձուղով։ Ծով որերին ավելի պիտի ջրել, վաղ գարնանը, յերբ գետ յեղանակը ցուրտ են, լավ են ջրել յերեկը, վորպեսի ջերմոցը շատ չցըտի։ Տաք յեղանակին ավելի լավ են յերեկոյան ջրել, վորովհետեւ հողն այդ ժամանակ ավելի լավ են ջուր ծծում և ջրի գորորշիացումը հողից դանդաղ են կատարվում։ Կարելի յեն ջրել նաև որվա շող ժամանակ, յեթե միայն ջրելուց առաջ շիթիւնն ստվեր արվի։

Շիթիւնոցը ջրելու ամենալավ ջուրը գետի ջուրն եւ անձրևաջուրը, իսկ ջրհորի ու աղբյուրի ջուրն այնքան ել լավ չե-

Շիթիւնի աճման սկզբնական շրջանում ջուր տրվում է որական շաղամ, առավոտյան և իրեկնապահին։ Յերեկոյան ջրելը շատ չպիտի ուշացնել, վորպեսի գիշերը շիթիւնները թաց չլինեն։ Հետազայում, յերբ արգել շիթիւններն ամրացել են, ավելի լավ է ջրել մեկ անգամ, բայց լավ ջրել այն ել իրեկնապահին։ Նույնիսկ կարելի յեն ջրել որը մեջ։

Շիթիւնի աճման սկզբնական շրջանում 1 քառ. մետր տարածությանը տրվում է միջյն հաշվով 2 լիտր ջուր, իսկ յերբ շիթիւններն աճեն, ամրացել են, յերեկոյան հիմնական ջրման ժամանակ 1 քառ. մետր տարածության տրվում է մինչև 4 լիտր ջուր։

2. Քաղանը—ջերմոցներից ու մարգերից մոլախոտերը քաղելը թանգ նստող, բայց միանդամայն անհրաժեշտ աշխատանք է։ Քաղանը պետք է կատարել վոչ շող ժամերին։ Արև ու շող որից քաղանը պետք է կատարել մեծ զգուշությամբ, այն եւ քաղաննելիք ջերմոցներն ու մարգերը պետք է ջրել ու հենց վոր արեն սկսի խիստ տաքացնել, պետք է ծածկել խուփերով և պիտի բանալ ջերմոցների ու մարգերի միայն այն մասը, վոր պիտի քաղանովի։ Քաղանված մասն առանց ջրելու նորից իսկույն պիտի ծածկել և անցնել մյուս մասերի քաղաննին։ Ջրել կարելի յեն միայն յերեկոյան դեմ, յերբ շիթիւններն ու հողը պաղել են։ Առանց այսպիսի նախագործուական միջոցների շող յեղանակներին քաղանները կարող են մեծ վնաս տալ շիթիւններին։

Այս աշխատանքը հետացնելու և եժանացնելու համար, հարկավոր են առաջուց հոգ տանել, վոր շիթիւնոցի մեջ վորքան կարելի յեն քիչ մոլախոտերի սերմեր ու արմատներ ընկնեն։ Այդ կարելի յեն անել մի քանի ձեռվ. գոմազը ցանելուց առաջ ըռվելով և ամառվա ընթացքում մոլախոտերը շիթիւնոցից վոչնացնելով, վորի համար չպիտի թույլ տալ, վոր նրանք սերմակալեն, այլ պետք է ամառվա ընթացքում մի քանի անգամ հնձել։ Այդ խոշոր խնայողություն կլինի հետոպա քաղանի գործում։

3. Ստվեր գցելը և ընդհանրապես ի ու փերի գործածությունը—խոշոր անհրաժեշտ են ամենից առաջ նոր բուսած շիթիւնները ցրտերից և մանավանդ ուշ գարնան՝ սառնամանիքներից պաշտպանելու համար։ Խուփերը գործ են ածվում նաև կարկտից, հորդ անձրեներից և արեի այրող ճառագայթներից պաշտպանելու համար։ Ապակեպատ շրջանակները լավ են

կուտակում արեի տաքությունը, սակայն միշտ չեն պաշտպանում սահմանիքներից, դրա համար խիստ ցուրտ գիշերները ջերմոցները պահում ախտի ծածկել վորեւ լրացուցիչ ծածկոցով:

Խսիրները լավ են պաշտպանում կարկտից և մասամբ հորդ անձնեներից: Քաֆտնի և այլ թեթև ծածկոցներն ավելի վատ են պաշտպանում, սակայն որվա շող ժամերին շատ լավ միջոց են առվեր գցելու և արեի ճառագայթների աղղեցությունը թուլացնելու համար:

Ծխախոտի շիթիլ աճեցնելիս, ստվեր դցելու վրա հատուկ ուշադրություն պիտի գարձնել, վորովհետև, յնթե այդ աշխատանքը խելացի ու ճիշտ կատարվի, կալակասեցնի ջրեւու պահանջը և զրա հետ կալված աշխատանքն ու ծախսը, շող ու քամու որերին մատադ շիթիլները կապաշտպանի չորսցումից ու հիվանդությունների առաջը կատնիտ Յերբ շիթիլը մի քիչ մեծանում և, ավելի հեշտ և դիմանում շողին, վորովհետև նրա արմատիկները մտնում են խոնավ հողի խորքը, իսկ տերեներն արդեն ստվեր են գցում, ուստի և հողն այնքան չի տաքանում: Այդ ժամանակ շիթիլների վրա ստվեր դցել կարելի յի որվա ամենաշող ժամանակը:

Ստվեր գցելը չափագանց անհրաժեշտ և, յերբ շող որերին չոր քամի յի փշում:

4. Փտած աղբ ավելացնելու աղբ ավելացնելու աշխատանքը պիտի և կատարել քաղաքանելուց և տնկելու համար շիթիլ հանելուց հետո: Փտած աղբ ավելացնելն առանձնապես կարելոր նշանակություն ունի շիթիլների արմատային սիստեմն ամրացնելու համար, կողարմատի մեծ քանակություն առաջացնելու, վորը հետագայում, շիթիլը դաշտը տեղափոխելուց հետո, նպաստում ե ավելի արագ արմատակալելուն: Բացի այդ, ավելացրած հողը բարեկավում է շիթիլի սնունդը և արագացնում է նրա աճումը:

Փտած աղբի ավելացում կիրառվում ե նաև շիթիլների հիվանդության դեպքում:

Փտած գոմաղբի ավելացում կարելի յի կատարել ավելի աճեցման ամբողջ ընթացքում 3—4 անգամ: Ավելացում կատարվում է կամ մեռքով շաղ տալով կամ մաղի միջոցով, աշխատելով, վոր համաշափ ու կանոնավոր ցանվի:

5. Պարարտացուցիչ ջրումը.—ջերմոցների և մարդկերի պարարտացումն ընդհանրապես անհրաժեշտ է, սակայն ավելի հաճախ պարարտացվում է այն դեպքում, յերբ շիթիլն աճեցվում է փուլը՝ պալաղային հողում կամ արդեն լվացված, հին հողերում:

Այդ նպատակով գործ են աճվում հետեւալ լուծույթները, սելիտրտ (չիլիական) կամ ծծմբաթթվուտային ամմոնիում—50 գրամը 1 ցնձուղ ջրի հետ խառնելով, վորով ջրում են 4 քառամետր տարածություն: Կարելի յի գործադրել նաև հավի աղբ (ծերտ), հեղուկ զրությամբ: Դրա համար վերցնում են 13 գույլ ջրին 1 գույլ ծերտ, խառնում ու թողնում 1—2 շաբաթ, վորուպիսի ծերալ լուծվի ջրի մեջ (հաճախ պիտի խառնել, վորպեսզի շուտ լուծվի): Այդ լուծույթով ջրելիս պետք ե ավելացնել նույնքան ջուր և ջրել յերեկոյան կամ ամպամած որ: Շիթիլին հանգան ջուր և ջրել յերեկոյան կամ ամպամած որ: Շիթիլին հանգան ջուր և ջրել յերեկոյան կամ ամպամած որ: Շիթիլին հանգան ջուր և ջրել յերեկոյան կամ ամպամած որ: Շիթիլին հանգան ջուր և ջրել յերեկոյան կամ ամպամած որ:

Պարարտացուցիչ ջուրը պիտի սկսել տալ այն որից, յիշը շիթիլն արդեն ավել և յերբորդ տերելը (չաշշված առաջին 2 սեպմատերեները): Պարարտացուցիչ ջուր տալը պիտի դադարեցնել շիթիլները քաղելուց 2 շաբաթ առաջ, հակառակ դեպքում ջիթիլները չափագանց նուրբ և յերկարավուն կլինեն:

6. Շիթիլի ընտրությունը.—շիթիլի քաղն սկսելուց մի շաբաթ առաջ պիտի նրանց այնպես խնամել, վոր աստիճանաբար վարժվեն խոնավության պակասությանը, քամբիներին ու արեկի ուժեղ լույսին, վոր կարելի յի անել ջրելը կրճատելով, գիշերները չձածկելով, պարարտացումը դադարեցնելով:

Տնկելու համար ամենահարմար շիթիլն է համարվում այն շիթիլը, վոր ունի 5—7 սանտիմետր ցողուն և 7—5 տերեն, չաշշված առաջին 2 սեպմատերեները: Ամճան այդ շրջանում, յերբ շիթիլը ծոռում են, չի կոտրվում: Շիթիլներն ընտրելուց առաջ, շիթմացները կամ մարգերը պետք ե լավ ջրել վորպեսզի հողը փափկանա և ավելի հեշտ լինի շիթիլներն արմատներով հանել: Շիթիլները քաղելիս, պիտի ընտրել այնպիսիները, վորոնք լիովին առողջ և պիտանի յեն տնկելու համար:

Շիթիլը քաղելու ամենահարմար ժամանակն առավոտն է,

յերբ արելը դեռ չի սկսել ուժեղ տաքացնել, և յերեկոյան, յերբ ցերեկվա շոգը կոտրվել եւ Որվա մնացած ժամանակը շիթիլ քաղել կորելի յե միայն այն դեպքում, յեթե որն ամպամած եւ: Սակայն, յեթե չափազանց անհրաժեշտ եւ շոգ յեղանակին շիթիլ քաղել այդ դեպքում պետք եւ նախապես ստվեր զցել ջերմոցի կամ մարդի վրա:

Շիթիլը պոկելիս յերկու մասով բռնում են տերեներից ու քաշում առանց ուժեղ ձիգ տալու և ապա պոկած շիթիլները համբելով, գարսում են մյուս ձեռքում այնպիս, վոր արմատները ըստ մեջ լինեն: 50 հատ շիթիլ հավաքելուց հետո, դաստայով դնում են ջերմոցի մոտ, մի շվաք տեղ: Շիթիլը չի կարելի արևի տակ դնել, թեկուզ և վորեն բանով ծածկած, վորովճետն այդ դեպքում նա շուտով թառամում եւ Քաղված շիթիլները դարսվում են շարքերով և այդ դրությամբ նրանք առանց փչանալու կարող են դիմանալ 2 որ: Սակայն զամբյուղի կամ արկղի մեջ հավաքված շիթիլն այդքան չի դիմանա, կարող եւ տաքանալ: Յեթե շիթիլն արկղով կամ զամբյուղով եւ զաշտ փոխազդրվելու, պետք եւ զամբյուղը կամ արկղը թրցել, հատակը ծածկել թարմ խոտով և շիթիլները նրա մեջ դարսել այնպես, վոր արմատները ներսի կողմը լինեն: Այս դրությամբ շիթիլը պիտի դաշտ փոխազդրել առանց ուշացնելու:

IV. ԳԼՈՒԽ

ԾԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍԱՑՈՒՆԵՐԸ

Մեր դյուղատնտեսության և մասնավորապես ծխախոտագործության սոցիալիստական զարգացումը հրամայական խնդիր և դնում մեր առաջ՝ բերքատվությունը բարձրացնել վոչ միայն քանակապես, այլև վորակապես:

Ծխախոտի բերքի թերթը և թե քանակը և թե վորակը հաճախ պակասում և զանազան հիվանդություններից ու վնասատուներից, վորոնք նախ յերեսում են շիթիլանցներում, ապա դաշտ փոխազդրված շիթիլի հետ փոխազդրվում են ծխախոտի շիթիլանցները. այնտեղ ել շարունակում են իրենց ավերիչ գործունեյությունը:

ԾԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅԻՍԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծխախոտի շիթիլների հիվանդությունների մասին խոսելիս, ամենից առաջ պետք եւ ասել, վոր մեր նախակինում ասկած բոլոր միջոցառումները ճշտորեն կատարելը (Զերմոցներ պատրաստելը, շիթիլների խնամքը և այլն), խոշոր նշանակություն ունեն շիթիլանցները հիվանդությունների կործանարար աղղեցությունից փրկելու գործում: Յեկ այդ շատ հասկանալի յե, վորովհետեւ հիվանդությունների դեմ պայքարելու ամենալավ ձեն և չթողնել, վոր հիվանդությունը շիթիլանց մտնի, իսկ այդ կարելի յե անել շիթիլանցն ու նրա հետ կապված բոլոր իրերը ախտահանելով:

Ծխախոտի շիթիլի ամենատարածված և վտանգավոր հիվանդությունը շիթիլի փտումն եւ արմատի փտումը և բակտերային չեչոտությունը (տերեների վրա բներ առաջանալը):

Շիթիլի փտում հիվանդությունն առաջացնում և ման-

բագիտակով միայն տհսանելի մի պարագիտ, վորը կոչվում է և պիտում:

Այս հիվանդության նշանները հետեւալներն են.

1. Զերմոցի վորոշ տեղերում շիթիները թառամում են ու պակում, վորից աեղ-տեղ նույնիսկ բացվում և ջերմոցի հողի մակերևույթը.

2. Փոխվում ե շիթիի գույնը, դառնում ե կեղտոս կանաչավուն կամ դարչնագույն:

3. Զերմոցի յերեսի հողը շարունակ խոնավ և լորձունքութիւն պես ե: Այս հիվանդությունը սովորաբար յերեւմ ե շիթիի փոքր ժամանակ: Այս հիվանդության առաջացմանը նմասսում ե տաք, խոնավ յեղանակը, հողի չափից ավելի խոնավությունը ջերմոցներում և չափից ավելի խիտ շիթիլը: Այս պայմաններում թույլ հողմահարում ե լինում, շիթիների մեջ կանդնած և մնում խոնավ ողը, վորից նրանք չափազանց նրանում և հեշտությամբ հիվանդում են այդ սունկով, վորն ամենից շատ տեղավորվում և շիթիի ցողունների վրա, հենց հողի մակերեսին և առաջացնում ե փտում: Շիթիի փտումը շատ դժվարությամբ և բռնվում, ուստի և այդ հիվանդության դեմ պայքարելու հիմնական միջոցը հիվանդությունը կանխելն է: Վարակված տեղի վրա կամ ծծումը են ցանում կամ թե ըվանում են աղնձարջասպի ուժեղ լուծույթով (300 գրամ 1 դույլ ջրին): Այդ լուծույթն այսպես պիտի լցնել վարակված տեղի վրա, վոր առողջ շիթիների վրա չթափի:

Վարակված վայրերը կարելի յե այրել նաև յեռման ջրով այն դեպքում, յերբ պղնձարջասպ չկա:

Սրանից հետո պետք ե մի շարք նախադդուշական միջոցներ ձեռք առնել, վորպեսզի մնացած առողջ շիթիները չիվանդանան: Դրա համար պետք է ջերմոցները բանալ, վոր ոդ խաղա և մակերևույթը չորանա: Յեթե ջերմոցը շատ ե խոնավ, պետք ե մի քանի որով դատարեցնել ջրելը, վորպեսզի հողի մակերեսը շարունակ խոնավ չմնա, այլ հնարավորություն ունենա չորանալու: Վարակված ջերմոցների շիթիլը լով ե ջրել պղնձարջասպի թույլ լուծույթով (1 դույլ ջրին 25 գրամ), ապա վողողել մաքուր ջրով:

Պղնձարջասպը պետք է ջրի մեջ լուծել նախորոք փոշիաց նելուց հետո և սնապայման փայտի կամ կավե ամանի մեջ և վոչ մի դեպքում թիթիղի ամանի մեջ:

Լավ ե նաև բոլոր շիթիների վրա թեթևակի ծծումքի փռշի ցանել ըստ վորում ծծումքի փռշի ցանել կարելի յե միայն տաք ու չոր յեղանակին, վորովհետև խոնավ յեղանակին ծծումքը չի ներգործում: Այդ նպատակի համար կարելի յե գործածել հատուկ փոշոտիչ կամ ուղղակի ցանցառ կտորից կարված տոպրակ:

Ավելի լավ հետեւանք և ունենում շիթիին 1 տոկոսանոց բորդոյան հեղուկ սրսկի: Այդ հեղուկը պատրաստվում և հետեւյալ կերպ:—1 գույլ ջրին վերցնում են 120 գր. պղնձարջասպը և 120 գր. լավորակ, անպայման չհանգըրած կիր: Պղնձարջասպը լուծվում է քիչ քանակությամբ տաք ջրի մեջ, ապա վրան սառը ջուր և լցվում մինչև գույլի կեսը: Մի ուրիշ ամանի մեջ քիչ քանակությամբ ջրով հանգցվում է ամբողջ կիրը, վորը լիովին հանգչելուց հետո, նրա վրա ևս կես գույլ ջուր են ածում: Ապա այդ յերկու լուծույթները խոռնում են իրար մի յերրորդ ամենի մեջ, շարունակ խառնելով մի վորես բանով: Կանոնավոր պատրաստած բորդոյան հեղուկին իր մեջ պղնձարջասպի մնացորդներ չպիտի ունենա, հակառակ դեպքում, սրսկելիս կարող ե վառել շիթիները:

Պատրաստված բորդոյան հեղուկի կանոնավորությունը կարելի յե պարզել դանակի փայլուն բերանի միջոցով, վորը յեթե մի քանի բոպե ցցվի հեղուկի մեջ, չպետք ե ծածկվի պղնձի փոշով: Իսկ յեթե պղնձարջասպի մնացորդներ կան, անհրաժեշտ ե ելի կիր ավելացնել: Սրսկումը պետք ե կատարել վաղ առավոտյան կամ յերեկոյան, բայց վոչ շոգ ժամանակ և այն ել ցնձուղի մանրածակոտի մաղի միջոցով:

Բորդոյան հեղուկը պետք ե գործադրել պատրաստելուց անմիջապես հետո, վորովհետև յերկար մնալուց նա փշանում ե: Սրսկելուց առաջ հեղուկը պետք ե ցնցել:

Ծխախոտի շիթիի մյուս՝ բավական տարածված հիվանդությունն արմատի փտումն ե, վոր առաջանում և օտիելյալի առաջանալու շիթի պարագիտային սունկերից:

Այս հիվանդության տարածմանը նպաստում են նույն պայմանները, ինչ վոր վերը նկարագրեցինք:

Սրմատի փտման հիվանդության նշանները հետեւալներն են. շիթիլը դեռ փոքր ժամանակից շատ դանդաղ և աճում ու թույլ և զարգանում: Շիթիլն աստիճանաբար սկսում ե դեղնել և

բոլոր տերեները մուզանում ու չորանում են: Հիվանդ շիթիւի
համարյա բոլոր արմատները մուզ գույն են ստանում և փչա-
նում: Այդպիսի շիթիւների հողի մակերեսին մոտ աճում են նոր,
առողջ արմատներ, վորոնց ողնությամբ շիթիւը մի կերպ պահում
է իր դոյությունը: Ցեթե այդպիսի նոր արմատներ շատ առա-
ջանան, այդ գեղքում շիթիւը կարող ե ուղղվել, հակառակ գեղք-
ում նա կվոչնանա: Դրա համար պետք ե աշխատել այնպիս
անել, վոր հիվանդացած շիթիւներին նոր արմատներ առաջանան:
Անհրաժեշտ ե շիթիւնոցի վրա ավելացնել ջերմոցային խառ-
նություն—հողի, փափածքի և ավաղի, նաև շող որերին ստվեր գցել
ջերմոցի վրա: Բացի այդ, լավ և պարարտացուցիչ ջուր տալ
ծծմբաթթվուտային ամոնիումով:

Արմատի փաման հիվանդություն յերեան գալուն պես, պետք
ե ջերմոցից ընտրել հիվանդ շիթիւները, վոչնչացնել և այդ տե-
ղերը անվարակելի դարձնել այնպես, ինչպիս վերը նշված ե շի-
թիւի փաման մասին:

Ծխախոտի շիթիւնն մեծ վիաս և պատճառում նաև չեչոտու-
թյուն (քացախ) կոչվող հիվանդությունը, վոր յերեան և գալիս
զանազան ձեր ու գույնի բծերի կերպարանքով: Շիթիւի տերենե-
րի վրա բծեր կարող են առաջանալ զանազան պատճառներով,
սակայն ամենավտանգավոր չեչոտությունն այն ե, վոր առաջա-
նում ե հատուկ բակտերիաների միջոցով: Այդ բակտերիաներն
ապրում են շիթիւի վրա, ընդունակ են վարակը շատ արագ տա-
րածելու ամրող շիթիւնոցում և առաջացնելու շիթիւների
մասսայական հիվանդություն ու փչացում:

Այս հիվանդությունն սկսում է նրանով, վոր տերեների վրա,
սովորաբար նրանց յեղերին, յերեսում են մուզ-մոխրագույն բծեր,
վորն աստիճանաբար աարածվում և ամրող տերերի վրա և փտեց-
նում է այն:

Ցերենին փտումը տերեներից անցնում է ցողունին և շիթիւ-
ը ծավում է: Վերը նկարագրած շիթիւի փտում հիվանդությունից
այս տարբերվում է նրանով, վոր շիթիւի փտումն սկսվում է ցո-
ղունից, իսկ չեչոտությունը՝ տերեներից: Առանձնապես կարենոր
և չեչոտություն հիվանդությունը ճանաչել շիթիւը դաշտ փոխա-
դրելու ժամանակ, վորովհետ հիվանդ շիթիւը դաշտ տեղափոխե-

լուց՝ հաճախ այդ հիվանդությամբ վարակվում ե ամբողջ ծխա-
խոտի դաշտը:

Բակտերյալ (քացախ)-յի դեմ կովելու ամենալավ միջոցը, դա-
սերմի ախտահանելն ե լապիտով՝ մինչև ցանքը:

Ցեթե շիթիւնոցում բակտերյալ չեչոտություն և նկատվում,
հենց սկզբից պետք ե այդ հիվանդության առաջն առնել: Դրա
ամենապարզ ձևն ե վարակի բներին յեռացրած ջուր լցնել, ապա
ցանել մի քանի սանտիմետր հաստությամբ ջերմոցային խառ-
նությունը: Պետք ե ցանել վարակումից աղատված հող: Վարակված
տեղերը յեռացրած ջուր ցանելիս՝ պետք ե այդ տեղի շուրջը մի-
քանի առողջ շիթիւների վրա ևս ջուր ցանել, վորովհետև նրանք
կարող են արդեն աննկատելի կերպով վարակված լինել: Այդ
հեղուկը միջոցը՝ շիթիւներին բորդոյան հեղուկ սրսկելն ե: Այդ
կարեւոր պիտի սրսկել յուրաքանչյուր 5—7 որը մեկ անգամ:

Վարակի բների վոչնչացումը և բորդոյան հեղուկ սրսկելու
աշխատանքը պիտի կատարել տնկելու համար շիթիւ հանելուց
առաջ, վորովհետև այդ աշխատանքը կարող ե նպաստել վարակի
տարածմանը:

Վոչ շատ շող, անձրեային յեղանակը շատ բարենպաստ պայ-
ման ե չեչոտության դարգացման համար: Հիվանդությունն ել
ավելի լրջանում ե, յերբ տերեների վրա յերկար ժամանակ մնում
են ջրի կաթիւները: Դրա համար ջերմոցների շիթիւներն ապահո-
վելու համար, այդ ժամանակ պահանջվում է չափավոր ջրել և
քամհարել:

ԾԽԱԽՈՑԻ ՇԻԹԻՒԼԻ ՎՆՍՍՍՏՈՒՆԵՐԸ

Շիթիւի ամենավասանգավոր վնսատուն արջուկն ե, վորին
շատ լրջաններում անվանում են իշախառանչ, վորոց տեղեր ել
ուղղակի խառանչ: Այդ միջատն ապրում ու վիաս և հասցնում
շատ տեղերի և շատ տեսակի բույսերի: Իշախառանչն առանձնա-
պես շատ վիաս և տալիս ծխախոտի շիթիւներին: Շիթիւնոցում
անա իր համար անցքեր և փորում ե շիթիւների արմատ-
նա իր համար անցքեր և փորում ե շիթիւների արմատ-
ները, հողի տակ յեղած մասերը: Արջուկի (իշախառանչի) սիրած
տեղերն են գոմազքի կույտերը և հողի փուխը շերտերը, մանա-
վանդ ջերմոցներն ու մարգերը, վորաեղ նա սնունդ վորոնելիս՝
շարունակ անցքեր և փորում, հողը դուրս բերում գետակ յերեսը,

Վորից շիթիլը տեղատեղ թառամում ե, դեղնում և նույնիսկ բռ-
լորովին չորանում: Դրա համար հարկավոր ե համախ նայել բոլոր
ջերմոցները և իշախառանչիք բացած անցքերը փակել ձեռքով կամ
փոքրիկ պնդոցներով: Սակայն այդպիսի հաճախակի ճնշումները
վնասում են շիթիլին նրանով, վոր գրանից շիթիլը ծավում ե և
լինթարկվում հիվանդությունների, իսկ հասունացած շիթիլն
ընդհանրապես ճնշել չի կարելի:

Քանի վոր իշախառանչը համարյա յուրաքանչյուր ջերմոցի
մշտական բնակիչն ե հանդիսանում, զրա համար հենց ջերմոցը
պատրաստելիս պետք ե միջոցներ ձեռք առնել, վոր իշախառանչն
ու նրա թրթուող գոմաղբի հետ չընկնեն ջերմոցի մեջ: Դրա հա-
մար շիթիլանցոցները պիտի պատրաստել այնպիսի տեղերում, ուր
այդ վնասատուները շատ չեն լինում:

Պայքարի միջոցները 1. փարիզյան կանաչով,
վոր պատրաստում են հետեւյալ ձեռք՝ 1 կիլո փարիզյան կանաչին
վերցնում են 5 կիլո ալյուր, վորին ավելացնում են 10—12 գդալ
արեածաղկի յուղ (ձեթ), վորպիս գրավչանյութ՝ և այնքան ջուր,
մինչև վոր խմոր դառնա: Յերբ արդեն խմոր ե գարճել, պատրաս-
տում են մանրիկ գնդակներ և մեկ սանտիմետր խորությամբ
թաղում հողի մեջ, մարգի յերեսին, 1 քառ. մետրի վրա մոտավո-
րապես 2—3 հատ և թույնը ծածկում հողով:

Յեթե հողի մեջ մացված գրավչանյութը ըավական չլինի
իշախառանչները վոչնչացնելու համար, այն դեպքում այդ գրավ-
չանյութը կարելի յն հետո նորից մտցնել հողի մեջ, վոչ այն-
քան խորը կամ ուղղակի մացնել իշախառանչի փորած անցքերի
մեջ: Այստեղ անհրաժեշտ ե հիշել, վոր փարիզյան կանաչն ուժեղ
թույն ե, ուստի նրա հետ շատ զգուշ պիտի փարվել վորպիսի
պատրաստողը և հողի մեջ մտցնողը չթունավորվեն:

2. Միշտ պայքարում են նաև միշտ-
կով: Այդ սպատակի համար վերցնում են աղացած յեգիստացո-
րեն, յեփում են մինչև փափկելը, վրան ավելացնում են միշյակ,
1 փութ կուկուռուզին 1—2 գրանքա (սպիտակ միշյակ) և ամ-
բողջ սասսան նորից յեռացնում են: Այս ձեռք թունավորված
յեգիստացորենը լցնում են մարգերը, արջուկի շարժման տե-
ղերը կամ բներում 1 սանտիմետր խորությամբ և ծածկում են
հողով:

Զերմոցներում թունավորված ու սատկած իշախառանչները
չպետք ե դուրս թափել վորովհետև իշախառանչը գիշատիչ մի-
ջատ ե, նըանք հաճախ ուտում են իրար և առողջ իշախառանչը
թունավորվածին ուտելով, ինքն ել թունավորվում ե ու սատ-
կում:

Հաճախ շիթիլանցոցում կարելի յե գոնել իշախառանչի բու-
նը, վորը լինում և մի քանի կլոր անցքերով գեպի հողի յերեսը,
վորոնք իշախառանչի մուտքն են հանդիսանում: Այդ բներից
իշախառանչին դուրս քշել կարելի յե անցքերի մեջ սապնաջուր
լցնելով:

Շիթիլանցոցի վնասատուների դեմ պայքարելու գլխավոր մի-
ջոցն ե—շիթիլանցոց շարունակ մաքուր պահել ավելորդ գոմաղ-
բից ու աղբից, վորի մեջ հավաքվում ու բաղմանում են իշախա-
ռանչները:

Բոլոր տաք ջերմոցները, վորոնց մեջ փոփոք ե յեղել գոմ-
աղբ, շիթիլը քաղելուց հետո պետք ե քանդել և բոլոր նյութերը
հեռացնել:

Այս բոլոր միջոցներն պահակար աղգեցություն են ունե-
նում վոչ միայն իշախառանչի այլև մյուս վնասատուների դեմ:

ՄԻՆՉԵԼ ՎԵՐԱ ՊԱՅՔԱՐԵՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱ-
ՅԻՆ ԿԱՐԳՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՅԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐՁՐ
ԱՐՏԱՌՈՒՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ՝ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ
ՅԵՎ ՅԱԼԵՒՌՈՒՄ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԳԼՈՒԽ

ՇԻԹԻԼՈՆՈՑՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ	3
-------------------------------------	---

II ԳԼՈՒԽ

ԶԵՐՄՈՑՆԵՐ ՈՒ ՄԱՐԴԵՐ ՀԻՄՆԵԼԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ	9
ԶԵՐՄՈՑՆԵՐ պատրաստելը	9
Մառը մարգեր պատրաստելը	11
Սննդարար նյութերի խառնուրդ խնամքը	12

III ԳԼՈՒԽ

ԾԱՎԱԼՈՒՆ ՖՐՈՆՏՈՎ ԴԵՊԻ ԾԽԱԽՈՏԻ ՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ	14
Ծխախոտի շիթիւի խնամքը	17

IV ԳԼՈՒԽ

ԾԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎՆԱ- ՍՍՏՈՒՆԵՐԸ	23
Ծխախոտի շիթիւի հիվանդությունները և նրանց զեմ պայքարելու միջոցները	23
Ծխախոտի շիթիւի վնասառուները	27



NL0936257

ՀՀ Ազգային գրադարան

ԳԻՒԸ 60 ԿԱՊ.

1934թ. - 196

11

27041



СССР Наркомснаб

Всесоюзный институт табачной промышленности
Опытная станция по табаководству ССР Армении

Рассадники табака